ձեցի զկառ մի Հրէի և գնացի ի Սնաթին, որ հեռի էր միով մղոնաւ։ Ի մտանել արեւուն հասեալ անդ, խոտորեցայ ի տուն Ռուզի ումեմն, և առաքեցի զպաշտօնեայն ի խնդիր քահանային մերոյ, և չէր անդ. այլ՝ այլ իմն օտարական՝ Թերեւս և խաբեբայ՝ տեղապահ նորա եկն. որում ծանուցեալ զինէն՝ պատուիրեցի մի ումեք յայտնել, այլ միայն գտանել զօթեւան. և նա ոչ յամեալ եգիտ, մերձ եկեղեցւոյն Հայոց և Տօմինիքանաց. ուր գնացեալ գտի անձուկ և ժահահոտ, վասն որոյ արտաքոյ ընդ ծածկութիւ նստեցի։

20. Ի շաբաթոջ առաւօտուն ոչ գնացի յեկեղեցին Հայոց, զի մի ճանաչիցէի. այլ առ Տօմինիքանս, ուր՝ մինչ լսէի զպատարագ, զկնի իմ եկեալք էին և Հայք ոմանք. որպէս, Բան Դանիել Ծառուկեան՝ մաքսապետ Թագաւորութեանն Լեհաց, նախածանօթ իմ, ընդ ոմանց Լէօպոլսեցւոց. ընդ որս էին Թէօտոր Սապաթ և Գաբրիէլ Պալսամովից. սոքա յետ իմ իբր ի չորրորդում տեղւոջ կացեալք, և նշմարեալք զիս տնտղմամբ, քրթմնջէին, որպէս ինքեանք յապա խոստովան եղեն. մինն, թէ այս այր Սվէտ ումն է, և լրտեսել զքաղաքս եկեալ է. միւսն, ո՞չ ապաքէն գրապան վերարկուին ապացուցանէ զայնպիսի ումն գոլ. ամենեւին ծանուցանելի է կառավարչի քաղաքիս. գուցէ ի Թագստի ունիցի ուրեք զզինուորս և անկարծ ըմբռնիցէ զսա։ Այէ առաջինն, եթէ ոչ արասցէ զմեծարանս սրբազնասրբոյ Խորհրդոյն՝ ստոյգ Լութերան է, և դարանակալել զքաղաքս կամի։ Իբրեւ ոչ ի բաց առի զթասակ գլխոյս՝ ի վերացուցանել սրբոյ Խորհրդոյն (քանզի ենթադատմամբ արարի՝ ոչ ցուցանելոյ վասն զպսակ գլխոյս,) իսկոյն ենթատրոհեցին երկաքանչիւրն՝ թէ արդարեւ Սվէտ իցէի։ Ցետ պատարագին՝ ելեալ յաթոռոյ անտի՝ ի գնալն տեսի զԲան Ծառուկօվիցն, որ կանգնեալ ի նստելոյն՝ խնարհապէս արար զմեծարանս, համարելով՝ թէ գործակալ կամ պետ ումն զինուորաց իցէի, զի ունէի զվերարկու կարմիր՝ ըստ զօրապետաց Ալէմանաց. և ամենեցուն մերայնոց աչք յիս կառուցեալք էին, և ոչ կարէին ճանաչել յայլակերպութենէ. իսկ ես ոչ հայելով ուղղակի առ նոսա, այլ ընդ ակամբ նշմարելով՝ ելի յեկեղեցւոյն։ Իբրեւ սակաւ ինչ հեռացեալ յեկեղեցւոյն հայեցայ յետս, ահա մերայինք ամենեքեան կային առ դրան եկեղեցւոյն, տեսանել՝ թէ յո երթայցէի. նշմարեցի ուրեմն ձեռամբ՝ Պալսամովիցին, որ իսկոյն մատեաւ առ իս, մնալով այլոց ի տեղւոջն. ասեմ ցնա լեհերէն. ճանաչէս զիս։ Ի ձայնէ թերեւս ճանաչեալ՝ կամէր համբուրել զձեռս. զոր արգելի. և մի ումեք յայտնել զինէն պատուիրեցի. այլ զի երթեալ առ Բան Ծառուկօվիցն՝ լռելեան կոչիցէր առ իս. որ և վաղվաղակի եկն. որում ի հեռուստ ազդեցի՝ մի առնել զմեծարանս յատուկս, այլ իբր ծանօթի ուրուք ընկերակցիլ. հետեւէին պաշտօնեայք, ընտանիք նորա, և զոչինչ իմանային, մինչեւ ի տան անդր նորա ծանուցայ, պատուիրելով մի ումեք յայտնել։ Մնացի առ նմա զաւուրս երկուս, պատուասիրեցեալ մտերմաբար. որում յայտնեցի զխորհուրդս գնալոյ ի Սէչով. որ զընդդիմակն զգացեալ՝ հաւանեցոյց դառնալ ի Գամենից։